ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄՀԵՐ ՊԱՊՅԱՆ

Հայագիտության և բյուզանդագիտության մեջ պավլիկյանների պատմության և գաղափարախոսության մասին բավական շատ է խոսվել։ Արտահայտվել են բազմաթիվ տեսակետներ պավլիկյան շարժման ուսումնասիրման և պատմության մեջ նրանց տեղի և դերի գնահատման վերաբերյալ։

Խորհրդային պատմագիտությունը (Ա. Կարինյան, Վ. Ջալոյան, Ե. Լիպշից, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարթիկյան, Կ. Յուզբաշյան) առաջնորդվելով մարքս-լենինյան գաղափարախոսությամբ և դասակարգային պայքարի կանխադրույթով, պավլիկյան շարժումը հիմնականում ներկայացնում էր որպես ազատագրական, ժողովրդական շարժում՝ ուղղված դասակարգային թշնամիների դեմ։

Խորհրդային պատմագրությունը բացարձակացրել է պավլիկյան շարժման սոցիալական շարժառիթները և էությունը, պավլիկյանությունը համարելով սոցիալական շարժում։ Սակայն հարկ է նկատել, որ եթե պավլիկյաններն ընդվզում էին իրենց հարստահարողների դեմ, ապա այդ ընդվզումը նախ և առաջ պետք է լիներ ընդդեմ օտար նվաճողների, որոնք արդեն երեք-չորս հարյուրամյակ տիրապետում էին Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածներում։ Այդ դեպքում շարժումը պետք է դառնար ազգային-ազատագրական և ուղղվեր արտաքին հակառակորդների դեմ։ Մինչդեռ լայն իմաստով ազգային-ազատագրական շարժում VIII դարի սկզբին Հայաստանում չկար (եթե նկատի չունենանք 703 թ. ապստամբությունը արաբների դեմ), այն մեծ թափ ստացավ միայն դարի կեսերին։ Այս առումով մի փոքր այլ էր վիճակը Հայաստանի բյուզանդական հատվածում, որտեղ հայ բնակչությունը, ապրելով բյուզանդական հասարակության օրենքներով, կարող էր սոցիալական ենթատեքստով մասնակցել պավլիկյան շարժմանը։ Այս դեպքում արդեն պավլիկյանությունը հայերի համար կարող էր նաև ազգային-ազատագրական շարժման ենթատեքստ ստանալ, քանի որ, վերջին հաշվով, ուղղված էր միևնույն հակառակորդի դեմ։ Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ, որ պավլիկյանների մեջ մեծ թիվ էին կազմում հույները և Բյուզանդական բազմազգ կայսրության ուրիշ շատ ազգությունների ներկայացուցիչներ, հետևաբար շարժումը չէր կարող ազգային նպատակներ հետապնդել։ Կարծիք կա նաև, թե VII դարի վերջում Հայաստանից գանձվող հարկերը փոխադարձ պայմանավորվածությամբ հավասարապես կիսվում էին Արաբական խալիֆաթի և Բյուզանդական կայսրության միջև, ինչն էլ սոցիալական ընդվզումներ էր առաջացնում այստեղ և նպաստում ազանդավորական շարժումների ակտիվացմանը[1]։ Սակայն, նախ VII դարի վերջում արաբների կողմից Հայաստանից գանձվող հարկը շատ փոքր էր, այդ մասին մատենագիրների բազմաթիվ հիշատակություններ կան, և միևնույն ժամանակ որևէ հիշատակություն չկա այն մասին, թե հարկերը գանձվել են համատեղ և խիստ ծանր են եղել հայ բնակչության համար։ Հայտնի է, որ հարկերը Հայաստանի արաբական հատվածում ծանրացան 725 թ. աշխարհագրից հետո։

---

[1] История Византии, М, 1967, с. 42.

Բոլոր ժամանակներում քրիստոնեության պատմությանն ուղեկցած աղանդավորական շարժումների գաղափարական, կրոնական ենթատեքստը, սուր, գլխային տարաբնույթ տարընթերցումներից և մեկնություններից դուրս, ընդսպված է պաշտոնական եկեղեցու դավանանքին և կենտրոնական կազմակերպությանը հակադրվելու վրա։ Ուստի որևէ աղանդավորական շարժում երբեք, կրոնական առումով, սկզբունքային նոր կամ առանձնահատուկ գաղափարական ուղղվածություն չի ունեցել։ Այդ է պատճառը, որ վաղ միջնադարյան գրեթե բոլոր աղանդավորական շարժումները գաղափարական մեծ նմանություններ ունեն, կապված հեթանոսության, գնոստիկության որոշ էլեմենտների, աստվածաշնչյան դրույթների վերանայման հետ, և հաճախ խոսք է գնում դրանց՝ մեկը մյուսից առաջացած լինելու կամ միմյանց հետ ունեցած սերտ կապերի մասին։ Միևնույն ժամանակ, հստակորեն կարելի է ասել, որ աղանդավորական շարժումները և հերձվածները մի ավելորդ անգամ առիթ և անհրաժեշտություն էին ստեղծում եկեղեցու համար հստակեցնելու, ամրագրելու պաշտոնական եկեղեցական գաղափարախոսությունն ու դավանաբանությունը, առավել զորացնելու եկեղեցու կազմակերպական կառույցը։

Պավլիկյան շարժումը նույնպես գրեթե ոչնչով չէր առանձնանում վաղ միջնադարյան այլ աղանդների որդեգրած գաղափարական և գործելակերպի սկզբունքներից։ Պավլիկյան գաղափարախոսությունը համակարգված, տեսականորեն հիմնավորված ամբողջական ուսմունք չէր։ Այն գերազանցապես գաղափարական և կրոնական առանձին սկզբունքների հանրագումար էր, որ պայմանավորված էր իշխող կրոնագաղափարական պատկերացումների մերժմամբ[2]։

Այն հանգամանքը, որ պավլիկյան շարժումը մեծամասամբ տարածված էր բյուզանդական կայսրությունում և պավլիկյանների ազգային կազմը ավելի քան խայտաբղետ էր, հիմք է տալիս այն դիտարկել իբրև Բյուզանդական կայսրության հասարակության հակասությունների արդյունք և դասել վաղ միջնադարյան համընդհանուր քրիստոնեական այլ աղանդավորական շարժումների կարգը, որոնք չէին կարող ծրագրված և հետևողական նպատակներ հետապնդել, առավել ևս ազգային։ Հակադրվելով ընդհանրապես պաշտոնական եկեղեցական կազմակերպությանը և դավանական ուղղությանը՝ նրանց գործունեությունն ավելի շատ, տվյալ երկրի համար, պառակտողական բնույթ ուներ և հաճախ վարպետորեն օգտագործվում էր արտաքին և ներքին կենտրոնախույս ուժերի կողմից։

Երկար ժամանակ հայ մատենագրության մեջ առաջին անգամ պավլիկյանների մասին հիշատակման թվականը համարվում էր 554 թ.՝ Դվինի ժողովի կանոններում[3]։ Սակայն Հ. Բարթիկյանը, հենվելով բյուզանդական աղբյուրների տվյալների վրա, որոնցում պավլիկյանների մասին առաջին հիշատակությունները վերաբերում են VII դարի կեսերին, իրավացիորեն դրտնում է, որ 554 թ. Դվինի ժողովի կանոններում նշված աղանդավորներն իրականում Պողոս Սամոսատցու հետևորդներն են[4]։ Իսկ թյուրիմացությունը, թե-

---

2 Կ. Միրումյան. Պավլիկյան գաղափարախոսության աշխարհայացքային հիմքերը.— «Երաբեր հաս. գիտ.», 1996, № 2, էջ 142—143։ Ազգային կեցության հարցերի ուսումնասիրության տեսանկյունից Հայաստանում պավլիկյան շարժման պատմության որոշ ասպեկտներ Կ. Միրումյանը քննարկում է իր մեկ այլ «Պավլիկյան շարժումը ազգային կեցության համատեքստում» հոդվածում (Հայ իմաստասիրություններ հոգևոր մշակույթի համակարգում, 2, Երևան, 1995, էջ 49—73)։

3 Առաջին անգամ այս տեսակետը շրջանառության մեջ է դրել Կ. Տեր-Մկրտչյանը (Պավլիկյանց և Թոնդրակեցվոց աղանդները արդի քննադատությամբ.—«Արարատ», 1900 թ. հուլիս)։

4 Р. Бартикян. Источники для изучения истории павликианского движения Ереван, 1961, с. 26—31. 554 թ. եկեղեցական ժողովում պավլիկյանների մասին հիշատակության փաստն անհավանական է համարում նաև Ժան-Պիեռ Մահեն (Histoire du Christianisme, t. 4, L'eglise Armenienne de 611 a 1066, Desclee 1993, p. 484—485).

րևս, առաջ է եկել ուշ շրջանում գրիչների կողմից ձեռագիր մատյաններում անունները նույնացման հետևանքով։

Հայ իրականության մեջ պավլիկյաններն առաջին անգամ հիշատակվում են Աղվանքի եկեղեցական ժողովի ընդունած որոշման տեքստի մեջ։ Այն հրատարակել է նախ Ա. Տեր-Միքելյանը[5], այնուհետև՝ Երևանի Մատենադարանի հմր. 2966 և 3062 ձեռագրերի հիման վրա՝ Հ. Բարթիկյանը[6]։

Սրբազան Աղվանքի ժողովի որոշման բովանդակությանն անցնելը, թերևս, կարելի է պարզություն մտցնել ժողովի գումարման թվականի վերաբերյալ։ Ըստ Հ. Բարթիկյանի, ժողովը հրավիրվել է Պարտավում՝ Եղիա Արճիշեցու և Միքայել աղվանից կաթողիկոսի (702—737) օրոք[7]։ Եղիա Արճիշեցին Սերսեհ-Բակուր կաթողիկոսին և Սպրամ տիկնոջն արաբ ամիրապետի դատաստանին ուղարկելուց հետո Աղվանքում ժողով է գումարում, որն ընտրում է նոր կաթողիկոս՝ Սիմեոնին։ Մովսես Կաղանկատվացու հաղորդած տվյալներով դասաձայն Սիմեոնը գահակալում է մեկ և կես տարի, որից հետո կաթողիկոս է ընտրվել Միքայելը[8]։ Սակայն հետազոտողների շրջանում Սիմեոնի և Միքայելի աթոռակալության հարցը տեղիք է տվել շփոթությունների։ Հ. Աճառյանը գրում է, որ Միքայելը գահակալել է 707—742 թթ.[9], իսկ Սիմեոնը 713—715 թթ.[10] և, միևնույն ժամանակ, Միքայելը հաջորդել է Սիմեոնին։

Հ. Աճառյանը և Մ. Օրմանյանը Եղիա Արճիշեցի կաթողիկոսի Աղվանք գնալու թվականը համարում են 713 թ.[11], իսկ Հ. Բարթիկյանը՝ 702—705 թթ. միջև[12]։ Հ. Բարթիկյանն իր հաշվումները կատարում է ելնելով Մատենադարանի հմր. 2966 և 3062 ձեռագրերում պահպանված թվականից և նույն աղբյուրի հիման վրա պնդում, որ Եղիա Արճիշեցին Սերսեհից հետո կաթողիկոս է կարգել Միքայելին[13]։ Իսկ Բ. Ուլուբաբյանը գտնում է, որ Սերսեհ-Բակուր Աղվանից կաթողիկոսը դահլիկեց է արվել 699 թ.[14]։

Մեր կարծիքով, այս խնդրում պետք է առաջնորդվել Մովսես Կաղանկատվացու տվյալներով, որը և տալիս է այս շփոթությունների բանալին։ Բանն այն է, որ Մովսես Կաղանկատվացին հիշատակում է Աղվանից երկու եկեղեցական ժողովի մասին։ Դրանցից մեկը Պարտավում, ամենայն հավանականությամբ 703 թ. Եղիա Արճիշեցու գլխավորությամբ, երբ ընտրվեց Սիմեոն կաթողիկոսը[15], իսկ մյուսը՝ Աղվանից նորընտիր Միքայել կաթողիկոսի նախաձեռնությամբ[16]։

Ա. Տեր-Միքելյանի և Հ. Բարթիկյանի հրատարակած եկեղեցական ժողովի որոշման տեքստը հաստատապես վերաբերում է երկրորդ ժողովին՝ երկու պատճառով. նախ՝ որոշման մեջ հիշատակվում են ժողովին մասնակցած բոլոր հոգևորականներն ու աշխարհիկ տերերի անունները, որոնց մեջ, սակայն,

---

5 Մամուէլ Անեցի. Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, հրատ. Ա. Տեր-Միքելյանի. Վաղարշապատ, 1893. ծանոթ. 28, էջ 286։

6 Р. Бартикян. Указ. соч., с. 107—108. և Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. հ. 1, Երևան, 1981, էջ 729—730։

7 Р. Бартикян. Указ. соч., с. 31.

8 Մովսես Կաղանկատվացի. Աղուանից պատմութիւն. Երևան, 1983, էջ 297։

9 Հ. Աճառյան. Անձնանունների բառարան. հ. Գ, Երևան, 1946, էջ 357։

10 Նույն տեղում, հ. Դ, Երևան, 1948, էջ 495։

11 Նույն տեղում։ Մ. Օրմանյան. Ազգապատում. Կ. Պոլիս, 1912, էջ 814։

12 Р. Бартикян. Указ. соч., с. 32—33. Մեր կողմից ճշտենք՝ 703—705 թթ., քանի որ Եղիա Արճիշեցին կաթողիկոսական աթոռ է բարձրացել 703 թ.։

13 Նույն տեղում, էջ 33։

14 Բ. Ուլուբաբյան. Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության (V—VII դդ.). Երևան, 1971, էջ 273։

15 Մովսես Կաղանկատվացի. նշվ. աշխ., էջ 297։

16 Նույն տեղում, էջ 313։

ա հիշատակվում Եղիա Արճիշեցի կաթողիկոսը (մինչդեռ հայտնի է, որ առաջին ժողովը հրավիրվել էր նրա նախաձեռնությամբ և անմիջական գլխավորությամբ), երկրորդ, որոշման մեջ արգելվում են խառն ամուսնությունները, և Աղվանքի աշխարհիկ տերերը պարտավորվում են անվերապահորեն ենթարկվել հոգևորականների սահմանած կանոններին։ Մովսես Կաղանկատվացին հիշատակում է, որ Սիքայել կաթողիկոսի գումարած ժողովը հրավիրվել էր աղվանից իշխանների մոտ տարածված արյունակցական ամուսնությունների և այդ առթիվ կաթողիկոսի արգելքին նրանց չենթարկվելու պատճառով։ Աղվանից իշխաններից մեկն, արյունակցական ամուսնության համար մերժում ստանալով կաթողիկոսից, դիմել էր վրաց քաղկեդոնական եկեղեցու պետերին, որոնք, ի հակադրություն Աղվանից կաթողիկոսի արգելքի, արտոնել էին ամուսնությունը և պսակի արարողությունը կատարել քաղկեդոնական ծեսով։ Հենց դա էլ հիմք էր հանդիսացել Աղվանից իշխան և Գարդմանի տեր Ապոհյուպատ պատրիկ Սերոյի և սպարապետ Վարազ-Գրիգոր պատրիկի և մյուս իշխանների համար «ամենայն ազատօք» արտոնել հոգևոր իշխանության անհրաժեշտության դեպքում կազմակերպել պայքարը քաղկեդոնականության և աղանդների դեմ. «Թէ յորժամ դուք ձեռնարկէք յաղագս քաղկեդոնական աղանդոյն, եւ կամ Մայրագոմեցւոյն, եթէ վասն պայլի կենաց (պավլիկեանց՞)[17], եւ թէ վասն խառն ամուսնութեան, եւ թէ զինչ՝ն եւիցէ՝ ոչ ոք կարէ ելանել ըստ ձեր հրամանէ, եւ եթէ ոք ելանէ՝ յԱստուծոյ դատապարտեալ եղիցի, եւ դուք իշխան լիջիք ըստ կամաց ձերոց դատել եւ ոք յիշխանաց չունի իշխանութիւն օգնել (դատապարտվածներին), եւ ի պայմանիս, զոր կարգեցաք հաստատուն կացցուք»[18]։

Հստակ է, որ այս որոշումը վերաբերում է Միքայել կաթողիկոսի հրավիրած եկեղեցական ժողովին, որի մասին հիշատակում է Մովսես Կաղանկատվացին[19]։ Այս ժողովի հրավիրման թվականը պետք է համարել 705 թ., քանի որ որոշման մեջ հիշատակված (և որոշումն էլ իր կնիքով վավերացրած) Ապոհյուպատ պատրիկ Շերոն 705 թ. արաբների կողմից գերվեց և տարվեց Ասորիք[20]։

Ըստ Ա. Հակոբյանի հաշվումների, Եղիա կաթողիկոսը Աղվանքում ժողով է հրավիրել 704 թ. փետրվարի 27-ի և մարտի 28-ի միջև ընկած ժամանակահատվածում։ Իսկ Աղվանից երկրորդ ժողովը, Սիմեոն կաթողիկոսի հաջորդ՝ Միքայել կաթողիկոսի նախաձեռնությամբ՝ 705 թ. երկրորդ կեսում[21]։

Հրատարակելով Աղվանքի ժողովի որոշման տեքստը, Հ. Բարթիկյանը իրավացիորեն գտնում է, որ պավլիկյան շարժումը VIII դարի սկզբին որոշ արձագանքներ էր գտել Աղվանքում[22]։ Սակայն այն դեռևս լուրջ սպառնալիք և պայքարի առարկա չէր Աղվանքի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների համար։ Ժողովի որոշման տեքստը կազմված է ապառնի ժամանակով. «Թէ յորժամ դուք ձեռնարկէք...»[23]։ Նշանակում է ժողովի մասնակիցները միայն նախանշում են պայքարի հնարավորությունը մոտ ապագայում և, անհրաժեշ-

---

17 Հ. Բարթիկյանը «պայլի կենացն» ուղղում է «պաւլիկեանց» (Источники..., с. 32).

18 Սամուէլ Անեցի. ծանոթ. 28, էջ 286։

19 Ի դեպ, Մատենադարանի այն ձեռագիր ժողովածուները, որոնց մեջ պահպանվել է ժողովի որոշման տեքստը, ընդօրինակված են ուշ միջնադարում (XVII—XVIII դդ.) և ունեն «Ի պատմութենէն Աղուանից Մովսիսի Կաղանկատուացւոյ» վերնագիրը։

20 Р. Бартикян. Указ. соч., с. 33· С. Еремян. Моисей Каланкатуйский о посольстве князя Вараз-Трдата к Хазарскому хакану Али-Илитверу.—Записки ин-та востоковедения АН СССР. Т. 7, 1939, с. 154.

21 Ա. Հակոբյան. Եղիա Արճիշեցի կաթողիկոսի նորահայտ թուղթը.—ՊԲՀ, 1981,

22 Р. Бартикян. Указ. соч., с. 33.

№ 4, էջ 148—149։

23 Ս. Անեցի. ծանոթ. 28, էջ 286,

տության դեպքում, արտոնում հոգևորականությանն իր հայեցողությամբ կազմակերպել այն։

Աղվանքի հոգևոր և աշխարհիկ տերերի այս անհանգստությունը կարելի է բացատրել նրանով, որ Բյուզանդական կայսրությունը և քաղկեդոնական եկեղեցին, VII դարի սկզբին վրաց եկեղեցին հայ եկեղեցուց անջատելուց հետո, եռանդուն գործունեություն էին ծավալել Աղվանքում և Սյունիքում ևս քաղկեդոնականություն տարածելու ուղղությամբ[24]։ Այդ քաղաքականությունը միաժամանակ հետապնդում էր երկու նպատակ. թուլացնել հայ եկեղեցու դիրքերը և ապահովել Բյուզանդական կայսրության ազդեցությունը տարածաշրջանում։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Աղվանքի եկեղեցական ժողովը քաղկեդոնականության հետ միասին, որպես վտանգավոր հերձված, դիտում է պավլիկյանությունն ու երևութականությունը (աղանդ Մայրագոմեցւոյն)[25]։ Իսկ Հայաստանում, Հովհան Օձնեցու (717—728) կաթողիկոսության սկզբում, արդեն պավլիկյանները բավական լուրջ անհանգստությունների տեղիք էին տալիս. Քանզի, ինչպես նշում է Հովհան Օձնեցին, պավլիկյանները «յաշխարհամէջս եւ ի ժողովրդաբնակս համարձակեցան յարձակել տեղիս»[26]։

Հավանաբար, Հովհան Օձնեցու 719 թ. Դամասկոս կատարած այցելության և արաբ ամիրապետի հետ բանակցությունների ընթացքում քննարկվել էին պավլիկյանների դեմ պայքարի կազմակերպման հարցերը։ Սակայն, եթե արաբները ոչ միայն խրախուսում, այլև օգնում էին հայ հոգևոր իշխանությանը քաղկեդոնականության դեմ պայքարում. ապա պավլիկյանների հարցում արաբները զգուշություն են ցուցաբերում։ Որովհետև, ինչպես գրում է Հովհան Օձնեցին իր «Ընդդէմ պաւղիկենաց» ճառում, պավլիկյանները «...խորամանկեալ գտին յարութիւն իւրեանց ի դէն խոդխոդիչ քրիստոսաւորաց անձանց, դաշնակից լինելով բռնակալին կրճատելոցն...»[27]։ Արաբները շահագրգռված էին պավլիկյանների դաշնակցությամբ, քանի որ նրանց համայնքների գոյությունը արաբա-բյուզանդական սահմանում խիստ ձեռնտու էր արաբներին։ Բանն այն է, որ VII դարի վերջերին և VIII դարի սկզբներին արաբա-բյուզանդական սահմանը որոշակի չէր, գոյություն ուներ մի ընդարձակ սահմանային գոտի (սուղուր), որ ձգվում էր Տարսոնից մինչև Կարին[28]։ Այս սահմանային գոտու քաղաքներն ու բերդերը, անընդհատ ձեռքից ձեռք էին անցնում՝ մշտապես անհանգիստ վիճակում պահելով երկու կողմերին։ Արաբներին նպատակահարմար էր այս գոտու հյուսիսային հատվածում հովանավորել և ունենալ պավլիկյաններին, որոնք, հակամարտության մեջ գտնվելով կայսրության հետ, հարձակման դեպքում առաջին հարվածն իրենց վրա կրելու էին։ Այս վիճակը հատկապես բնորոշ էր արաբական տիրապետության առաջին շրջանին, երբ սահմանները ամրացնելու և սահմանամերձ գոտիները

---

24 Այս մասին տե՛ս Թեոփանես Խոստովանող. Հրատ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1963, նախաբան, էջ XXXVII ծանոթագր.։ Հովհաննես Սկիլիցես. Համառոտություն պատմությանց, հրատ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1979, նախաբան, էջ LXV։

25 Սամուէլ Անեցի. ծանոթ. 28, էջ 286։

26 Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք. Վենետիկ, 1833, էջ 51։

27 Նույն տեղում, հայ-լատիներեն. Վենետիկ, 1834, էջ 78։ Հովհան Օձնեցու մատենագրության 1833 թ. հայերեն հրատարակության այս հատվածում «կրճատելոցն» բառը բացակայում է. Հրատարակիչը՝ Մ. Ավգերյանը, այն նշել է բազմակետերով, իսկ 1834 թ. հրատարակության մեջ «կրճատելոցն» բառը կա, որ նշանակում է թլփատված (տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. Հ.Ա. էջ 1137), և, ամենայն հավանականությամբ, այստեղ վերաբերում է արաբներին (տե՛ս Р. Бартикян. Указ. соч., с. 35)։

28 Ա. Տեր-Ղևոնդյան. Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում. Երևան, 1965, էջ 46 և В. Арутюнова-Фиданян. Армяно-византийская контактная зона (X—XI вв.). М., 1994.

մահմեդական ցեղերով բնակեցնելու քաղաքականությունը մեծ թափ չէր ստացել։

Որքան էլ արաբները չէին թույլատրում պայքարել պավլիկյանների դեմ, այնուամենայնիվ Հովհան Օձնեցին լավ էր ըմբռնում նրանց վտանգավորությունը և միջոցներ էր ձեռնարկում գոնե թույլ չտալու պավլիկյանների տարածումը և ընդգրկումը ողջ երկրում։ Հովհան Օձնեցու հրավիրած 719 թ. Դվինի ժողովի սահմանած ԻԹ կանոնը զգուշացնում է ուղղահավատ հավատացյալներին չառնչվել և չհաղորդակցվել հերձվածողների հետ. «Ոչ է պարտ ամենեւին անխտիր լինել եւ հաղորդութիւն առնել ընդ հերձուածողաց. այլ խորշել ի նոցանէ. եւ չհաւասարել ընդ նոսա ի հոգեկան եւ ի մարմնական սեղանս. զի պատկառեսցէն եւ փափագեսցէն ընդ ուղղափառութեան աւանդիցս»[29]։

Դվինի ժողովի ընդունած վերջին՝ ԼԲ կանոնն, ամբողջովին վերաբերում է պավլիկյաններին. «Ոչ է պարտ ի չարաղանդ մծղնէիցն տեղիս, որ կոչին Պօլիկեանք, օթել ումեք, կամ լարել՝ եւ խօսակից լինել եւ երթեւեկութիւն առնել։ Այլ ամենեւին հեռանալ ի նոցանէ, գարշել ատեալ զնոսա, զի որդիք սատանայի են եւ լուցկիք յաւիտենական հրոյն, եւ օտարացեալ են ի սիրոյ կամաց արարչին։ Եթէ ոք իցէ՝ որ յարեսցի (ընդգ. մերն է) ընոսա, եւ ի սիրելութիւն եւ ի բարեկամութիւն եկեսցէ, պարտ է զայնպիսին խոշտանգել, եւ ծանր պատուհաս ի վերայ ածել, մինչեւ զգաստասցին եւ առաջասցին ի հաւատս»[30]։

Կանոնի բովանդակությունից կարելի է ենթադրել, որ պավլիկյաններն ապրում էին առանձին համայնքներով և Հովհան Օձնեցին պայքարում էր ոչ միայն ուղղակիորեն պավլիկյանների, այլ նրանց դեմ, ովքեր որևէ շփման կամ հարաբերության մեջ կմտնեին պավլիկյանների հետ[31]։ Փաստորեն, աղանդավորների դեմ Դվինի ժողովի սահմանած երկու կանոններն էլ ունեին կանխարգելիչ բնույթ և, թերևս, անհիմն է ուսումնասիրողների այն պնդումը, թե Օձնեցին Դամասկոսից վերադառնալուց հետո «էլ ավելի հետևողական պայքար ծավալեց պավլիկյանների դեմ՝ կիրառելով նրանց նկատմամբ պատժի խիստ միջոցներ»[32]։

Պատմագիտության մեջ երկար ժամանակ տիրապետող է եղել նաև հայր Բ. Սարգիսյանի կողմից առաջ քաշված այն տեսակետը, թե պավլիկյանները, ճնշվելով Հովհան Օձնեցու կազմակերպած հալածանքներից, վերակազմավորվեցին և սկսեցին հանդես գալ երևութականների անվան տակ[33]։ Սակայն այս տեսությունը վճռականապես մերժելի է, քանի որ պավլիկյան շարժումն աղանդավորական շարժում էր, իսկ երևութականությունը հերձված, և թե՛ ծագումով, թե՛ գաղափարաբանությամբ և գործունեության ձևերով միանգամայն միմյանցից տարբեր։

Պետրոս Սիկիլիացին իր «Պիտանի պատմության» մեջ գրում է. «Հերակլի որդի Կոստանդին կայսեր (641—668) թագավորության ժամանակ Հայաստանի Սամոսատում, Մանանալի անունով կոչվող գյուղում, հանդես եկավ Կոստանդին անունով մի հայ։ Այս գյուղը մինչև օրս մանիքեցիներ է սնում»[34]։ Պետրոս Սիկիլիացու այս հիշատակությունը ուսումնասիրողներին առիթ է տվել պավլիկյան շարժման սկզբնավորման վայրը համարել Հայաստանի Մանանալի գավառը։ Սակայն ոչ մի հայկական աղբյուրում Մանանալին որպես գյուղ չի

---

29 Յովհաննու իմաստասիրի Աւձնեցւ մատենագրութիւնք. Վենետիկ, 1833, էջ 32։

30 Նույն տեղում, էջ 33։

31 Р. Бартикян. Указ. соч., с. 38.

32 Ս. Մելիք-Բախշյան. Պավլիկյան շարժումը Հայաստանում. Երևան, 1953, էջ 15։

33 Բ. Սարգիսեան. Ուսումնասիրութիւն մանիքեա-պաւղիկեան թոնդրակեցիներու աղանդին. Վենետիկ, 1893, էջ 58։

34 Petri Sicili. Historia utilis et refutato atque eversio heareseos Manichacorum, qui et Paulicianum dicuntur Bulgariae Archiepiscopo nuncupata. Migne, Patrologia greaca. t. 104. Մենք օգտագործել ենք նույնի՝ Հ. Բարթիկյանի կողմից կատարված թարգմանությունը (Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. հ. 1, էջ 752),

հիշատակվում։ Իսկ Մեծ Հայքի Մանանաղի գավառը գտնվում էր Սամոսատից բավականին հեռու։ Պետրոս Սիկիլիացին նաև գրում է. «Նրա (Մանիի) աշակերտներից ոմանք հասան մինչև Հայաստանի Սամոսատ և չարի որոմը այնտեղ սերմանելով, տեղի հայերից շատերին մոլորեցրին»[35]։ Սամոսատը Մերձավոր Արևելքում հունական մշակույթի խոշորագույն կենտրոններից էր, որ արաբների կողմից նվաճվեց 639 թ., և դուրս էր գտնվում Հայաստանից և հայկական միջավայրից։ Ուստի պետք է կարծել, որ Պետրոս Սիկիլիացին կամ ինքն է շփոթության մեջ եղել, որն ավելի հավանական է, ցանկացել է շփոթության մատնել իր ընթերցողին։ Բանն այն է, որ մինչև պավլիկյան շարժումը կայսրությունում մեծ տարածում ուներ մանիքեականությունը, որի դեմ պաշտոնական եկեղեցին և պետական իշխանությունը կատաղի պայքար էին ծավալել և հասարակության մեջ համապատասխան ժխտողական վերաբերմունք ձևավորել դեպի մանիքեությունը։ Ուստի պավլիկյանների դեմ պայքարը դյուրացնելու նպատակով հաճախ նրանց միտումնավոր կերպով նույնացնում էին մանիքեականների հետ[36]։ Պետրոս Սիկիլիացու այս «շփոթությունը» թերևս պետք է համարել դրա հետևանք։ Ամենայն հավանականությամբ, նույն մտածողության արդյունք է նաև մանիքեական Կալինիկեի որդու (բնիկ որում՝ նույնպես սամոսատցի) մասին ավանդությունը, որն, ըստ Պետրոս Սիկիլիացու, դարձավ պավլիկյան շարժման հիմնադիրը և առաջնորդը[37]։ Համանման, Հովհան Օձնեցին էլ, իր հերթին, պավլիկյաններին նույնացնում էր մծղնեականների հետ հասարակության մեջ դեպի մծղնեականությունը տարածված վերաբերմունքը պավլիկյանների վրա տարածելու նպատակով։

Պավլիկյան շարժման ծագման հարցն առ այսօր միանշանակորեն լուծված չէ։ «The Oxford Dictionary of Christian Church» (Oxford, 1974) բառարանում պավլիկյաններ հոդվածի տակ նշված է. «Աղանդավորական շարժում Բյուզանդական կայսրությունում» (էջ 1053)։ Այստեղ պավլիկյանությունը ներկայացված է որպես Բյուզանդական կայսրությունում ծավալված և տարածված աղանդ։ Մինչդեռ Byzantium բառարանի «Պավլիկյանություն» հոդվածում, որի հեղինակն է Ն. Գարսոյանը, գրված է. «Աղանդ հայկական ծագումով», կամ «Ուսումնասիրողները համամիտ են, որ այս աղանդը հայկական ծագում ունի և նախատիպն է հանդիսացել թոնդրակեցիների շարժման»[38]։ Նույն կարծիքը Ն. Գարսոյանը հայտնել է և ավելի վաղ, հիմք ընդունելով Պետրոս Սիկիլիացու հիշատակությունը՝ պավլիկյան շարժման սկզբնավորումը Մանանաղիում Կոստանդին հայի կողմից առաջանալու վերաբերյալ[39]։

Բյուզանդական աղբյուրներում պավլիկյանների մասին ամենահին հիշատակությունը Թեոփանես Խոստովանողինն է։ Ըստ Թեոփանեսի ժամանակագրության՝ բյուզանդական Փիլիպպիկոս-Վարդան (711—713) կայսրն իր գահակալության առաջին տարում «արտաքսեց հայերին իր երկրից և ստիպեց բնակվել Մելիտենեում և Չորրորդ Հայքում»[40]։ Ավելի մանրամասն այս մասին տեղեկացնում է Միքայել Ասորին. «Այս ժամանակ հռոմայեցիների կայսր Փիլիպպիկոսը արտաքսեց հայերին իր կայսրության սահմաններից։

35 Այս մասին տե՛ս N. Garsoïan. The Paulician heresy. Paris, 1967, p. 71.

36 Հայ ժող. պատմ. քրեստոմատիա. հ. 1, էջ 750։

37 Պավլիկյաններին և մանիքեցիներին նույնացնելու հանգամանքը խիստ էական է եղել. Պետրոս Սիկիլիացին այդ նշում է նաև իր Պատմության վերնագրում. «Պիտանի պատմություն, եղծում և խորտակում մանիքեցիների (որոնք նաև պավլիկյաններ են կոչվում)...»։

38 Հայ ժող. պատմ. քրեստոմատիա. հ. 1, էջ 750։ Վաղ միջնադարյան Բյուզանդիայում նոր առաջացած աղանդները հների անուններով կոչելու մասին տե՛ս նաև J. F. Haldon. Byzantium in the seventh century (The transformation of a culture). Cambridge, 1990. p. 343.

39 The Oxford Dictionary of Byzantium, vol. 3, Oxford, 1991, p. 1606.

40 Թեոփանես Խոստովանող. Ժամանակագրություն. հրատ. Հ. Բարթիկյանի, էջ 94, նաև Նախաբան, էջ XXXVII.

Նրանք դուրս գալով ապաստանեցին արաբների մոտ։ Վերջիններս նրանց բնակեցրին Մելիտենեում և նրա շրջակայքում և Չորրորդ Հայքում։ Այդ հայերը դարձան արաբների թագավորության դաշնակիցները և հռոմայեցիների կայսրության հակառակորդները»[41]։ Այս երկու հիշատակություններում էլ, անկասկած, խոսքը վերաբերում է պավլիկյան հայերին, որոնց կայսրության նահանգներից քշում էին դեպի Հայաստան[42]։

Պավլիկյան շարժման ծագման մասին խոսելիս անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Հայաստանի արևմտյան նահանգները մի քանի հարյուրամյակ գտնվելով Բյուզանդիայի տիրապետության տակ՝ ենթակա էին բյուզանդական հասարակության իրողություններին։ Եվ պավլիկյան շարժումը, եթե նույնիսկ ծագել է պատմական Հայաստանի սահմաններում և պավլիկյանների մեջ մեծ թիվ են կազմել հայերը, ապա միևնույն է, այն պետք է դիտել որպես բյուզանդական իրականության ծնունդ։ Նույն կերպ և պատկերամարտությունը, որը սկիզբ առնելով Բյուզանդիայում, որոշ չափով արձագանք գտավ նաև Հայաստանում և Աղվանքում, թեև այստեղ դրա համար բոլորովին էլ անհրաժեշտ պայմաններ ու միջավայր չկար, և այն զուտ բյուզանդական երևույթ էր։

Պավլիկյանների գաղափարաբանության մեջ կարևոր տեղ էր գրավում պատկերամարտությունը[43]։ Հայտնի է, որ հայ եկեղեցին չափից դուրս զուսպ էր պատկերապաշտության հարցում[44]։ Իսկ Հովհան Օձնեցու «Ընդդէմ պաւղիկեանց» ճառի հիմնական մասը նվիրված է պավլիկյանների կողմից եկեղեցուն ուղղված պատկերապաշտության մեղադրանքների հերքմանը. «Եւ ուրիշ եւ աստուածային կրօնիցն մերոց յուսաւորութեամբ նախատել զմեզ յանօրէնին պղծալիցն իւրեանց շրթամբք, կռապաշտս անուանելով տէրունական առագաւ նշանապաշտութեանս»[45]։ Մինչդեռ իրենք՝ պավլիկյանները մոլորեցնում են հավատացյալ ժողովրդին «ի պատկերամարտութենէ ի խաչապաշտութիւն եւ ի քրիստոսատեացութիւն, եւ անտուստ յանաստուածութիւն եւ ի դիւապաշտութիւն»[46]։

Պետրոս Սիկիլիացին հաղորդում է մի կարևոր տեղեկություն Պավլիկյան շարժման ղեկավարներից մեկի՝ Գեղնեսիոսի, որ հայտնի է նաև Գեղնեսիոս-Թիմոթեոս անվամբ։ Լևոն Իսավրացի (717—741) կայսեր հրամանով ժամանում է Կոստանդնուպոլիս և կայսեր հետ հանդիպելուց հետո ուղարկվում է պատրիարքի մոտ հավատաքննության[47]։ Բյուզանդական կայսրությունն իր պատմության գրեթե ողջ ընթացքում դաժան և անզիջում պայքար է մղում աղանդավորների և հերետիկոսների դեմ։ Այդ պայքարի ընթացքում զոհվել են հազարավոր մարդիկ, կործանվել բազմաթիվ գյուղեր և բնակավայրեր։ Եվ, հանկարծ, կայսրն իր մոտ է հրավիրում պավլիկյանների զինված համայնքների ղեկավարին, որն արդեն հասցրել էր լուրջ անհանգստություններ պատճառել կենտրոնական իշխանությանը, և հանգիստ զրուցելով նրա հետ՝ ուղարկում պատրիարքի մոտ։ Պատրիարքն էլ իր հերթին բավարարվում է միայն «հաւատոյ բանաձեւերին» Գեղնեսիոսի տված դրական պատասխաններով։ Թեև հենց ինքը Պետրոս Սիկիլիացին էլ նշում է, որ Գեղնեսիոսը խորա-

[41] Michel le Syrien. Chronique. par J-B. Chabot, t. 2, Paris, 1963, p. 482.

[42] N. Garsoian. Op. cit., p. 116.

[43] Տե՛ս, The Cambridge medieval history, vol. 4. The Byzantine Empire, part I. Byzantium and its neighbours, Cambridge University press, 1966, p. 67.

[44] Այս մասին տե՛ս Ա. Սեդրակյան. Հայաստանեայց եկեղեցու պատկերագրությունը. Ն-Պր., 1904։

[45] Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, էջ 35։

[46] Նույն տեղում, էջ 34։ Պավլիկյանների և հեթանոսության կապի և այդ մասին Հովհան Օձնեցու «Ընդդէմ պաւղիկեանց» ճառում առկա հիշատակությունների քննության վերաբերյալ տե՛ս նաև J. Russell. Zoroastrianizm in Armenia, Harvard University press, 1987.

[47] Հայ ժող. պատմ. քրեստոմատիա. էջ 756։

մանկում էր և բանաձևերը հաստատում դրանք ընկալելով և մեկնաբանելով իր աղանդի տեսանկյունից[48]։ «Ահա այսպես Թիմոթեոսն ամեն ինչ աղավաղելով և առանձին-առանձին նզովք տալով, անմեղ հայտարարվեց և կայսեր կողմից սիգիլիոն (կնքված պաշտոնական փաստաթուղթ) ստանալով վերադարձավ էպիսպարիս, որտեղ հավաքելով իր բոլոր աշակերտներին, նրանց հետ փախուստի դիմեց և իբրև աստվածակործան Մանանաղի...»[49]։ Ն. Գարսոյանն, առանց աղբյուրը հիշելու, այս հիշատակությանն ավելացնում է նաև, որ Դեգնեսիոսը, Մանանաղի անցնելով, այստեղ հիմնեց երկրորդ պավլիկյան եկեղեցին (էպիսպարիսից հետո)[50]։

Նախ, եթե Մանանադին պավլիկյանների այսպես կոչված «ծննդավայրն» էր, ապա, թերևս, պավլիկյանները մինչև Դեգնեսիոսի Մանանադի գալը այնտեղ եկեղեցի կունենային, թեև պավլիկյան գաղափարաբանությունն ընդհանրապես մերժում էր եկեղեցին և եկեղեցական կազմակերպությունը։ Եվ հետևաբար Դեգնեսիոսը Մանանադիում եկեղեցի էր հիմնում, ուրեմն նա իրեն արդեն բավական ուժեղ էր զգում, և սխալ է ուսումնասիրողների այն կարծիքը, թե նա մի կերպ ազատվեց կայսեր և պատրիարքի ձեռքից (թեև հիշենք, որ նա մայրաքաղաք գնաց կայսեր հրավերով)։ Ուստի պետք է կարծել, որ Դեգնեսիոսի և կայսրի ու պատրիարքի միջև համաձայնություն էր կայացել պավլիկյան շարժումը Հայաստան տեղափոխելու շուրջ, թեև բյուզանդագիտության մեջ Դեգնեսիոսի և իր համախոհների Հայաստան անցնելը բացատրվում է նաև նրանով, որ նա իրեն ապահով չէր զգում կայսրության տարածքում[51]։ Սակայն ինչո՞ւ պիտի Դեգնեսիոսն իրեն անապահով զգար, երբ կայսեր տրված «սիգիլիոն» ուներ և ընդունել էր պատրիարքի ներկայացրած «հաստատ-բանաձևը»։

Թեոփանես խոստովանողի, Միքայել Ասորու և Պետրոս Սկևռացու հաղորդած տվյալները մեզ հիմք են տալիս կարծելու, որ VIII դարի սկզբին Բյուզանդական կայսրությունը նոր քաղաքական կուրս էր որդեգրել՝ պավլիկյաններին մղելով ոչ թե կայսրության հարավային շրջաններում և Հայաստանի սահմաններում։ Դրանով ժամանակի ընթացքում փոխվում էր տոնադրության ազդային նշումը, որտեղ սեռական էին նշվում հայերը, և տոնելով Հայաստան, նրանց ուրիշ վտանգ էին ստեղծում հայ եկեղեցու մեջ նախանձություն ունի Հայաստանյան է, որ կայսրությունում ոչ բոլորն էին մեծարում էին հայ եկեղեցին ոչ-քաղկեդոնականացնելու քաղաքաթեմ անհաջող փորձերից հետո, և այն ժամանակ, երբ հայերն արդեն սկսել էին բարահաճությունն նշանակել արաբներու։ Իսկ Հայաստանն էլ ստրեցության ուղղությամբ արդեն ունենալ կայսրությունը կունենար մի ուրիշ տարածք, որ արաբների հարձակման առաջին հարվածներն էր վրա կրնդուներ։

Միևնույն ժամանակ արաբները նույնպես շահագրգռված էին հոմանալորդ պավլիկյաններին և՛ Բյուզանդիայի դեմ մղած իրենց պայքարում, և՛ որպես միջոց հայ եկեղեցին թուլացնելու, որ միակ կազմակերպված և կարող ուժն էր Հայաստանում և կարող էր խոչընդոտ հանդիսանալ իրենց նվաճողական նկրտումներին։ Պավլիկյանների գոյությունը Հայաստանում ստեղծում էր նրանց հակառակորդ, որի դեմ պայքարը մեծապես կթուլացներ և կուժասպառ երկրի ուժերը, նպաստավոր պայմաններ ստեղծելով արտաքին թշնամիների համար։

Կարծես կա, թե Լևոն Իսավրացին խրախուսում էր պավլիկյաններին, որպեսզի վերջիններս դառնան կայսրության դաշնակիցները պատերազմարտու-

---

48 Նույն տեղում, էջ 756—757։

49 Նույն տեղում, էջ 757։

50 N. Garsoian. Op. cit., p. 118

51 Նույն տեղում, էջ 118, ծանոթ. 20։

թյան հարցում՝ քաղկեդոնական վանականության դեմ մղած իր պայքարում[52]։ Սակայն այս պարագայում բաց է մնում Կոստանդնուպոլսի պատրիարքի հովանավորության հարցը, նաև այն, որ այդ դեպքում Լևոն Իսավրացին կձրգտեր պավլիկյաններին մոտեցնել մայրաքաղաքին, այլ ոչ թե նրանց մղել դեպի Հայաստանի սահմանները, որտեղ ոչ պատկերապաշտներ կային, ոչ էլ առավել ևս, կայսերական վանականություն։ Միևնույն ժամանակ հայտնի է, որ Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքը դեմ էր պատկերամարտությանը և 726 թ., երբ Լևոն Իսավրացին բացահայտորեն պայքար հայտարարեց պատկերամարտության դեմ, կայսրն ու պատրիարքն ընդհարվեցին, որի արդյունքում Գերմանոսը գահընկեց արվեց և փոխարինվեց պատկերամարտ Անաստասով[53]։ Դրան զուգահեռ հիշատակություններ կան նաև այն մասին, որ Կոստանդին 5-րդ կայսրը (740—775) իր պատկերամարտական քաղաքականության մեջ հովանավորում և օգտագործում էր պավլիկյաններին։ Կենտրոնական և արևմտյան շրջաններում պատկերամարտների բանակն ուժեղացնելու նպատակով նա կայսրության արևելյան նահանգներից մեծ թվով պավլիկյանների տեղափոխեց դեպի Կոստանդնուպոլիս և Թրակիա[54]։

Քաղկեդոնական եկեղեցու հրավիրած Տրուլլի 692 թ. ժողովը պաշտոնապես դատապարտել էր հերետիկոսներին և հատկապես մանիքեականներին (պավլիկյաններին), որով և իրավական հիմք էր ստեղծել նրանց դեմ պայքարելու համար[55]։ Սակայն Լևոն Իսավրացին հակառակ գործողություններ է դիմում։ Մինչդեռ, ըստ նույն Պետրոս Սիկիլիացու տվյալների, երբ Կոլոնիայի եպիսկոպոսը իմանում է ընդհատակ անցած պավլիկյանների մասին, անհապաղ զեկուցում է Հուստինիանոս 2-րդ կայսրին (685—695, 705—711), որը հրամայում է հարցաքննել նրանց և ապանդիզ չհրաժարվողներին ողջակեղ անել։ Կայսեր հրամանն ի կատար է ածվում և առանձնապես Սիմեոն-Տիտոսը իր մեծաթիվ հետևորդներով խարույկ է բարձրանում[56]։ Իսկ այդ դեպքերից մոտավորապես մեկ և երկու տասնամյակ հետո կայսրը և պատրիարքը իրենց մոտ են հրավիրում նույն պավլիկյանների առաջնորդին և գոհանում «հաստատուն բանաձևերին» նրա տված պատասխաններով։

Ահա այս ժամանակն է, որ Հովհան Օձնեցին միջոցներ է ձեռնարկում ընդդեմ պավլիկյանների։ Ուսումնասիրողների շրջանում տարածված է այն տեսակետը, թե Հովհան Օձնեցու օրոք պավլիկյան շարժումը մեծ թափ և տարածում էր ստացել Հայաստանում, ինչը և ստիպել էր հայ եկեղեցու ներկայացուցիչներին դիմելու խիստ պատժամիջոցների։ Վերևում արդեն տեսանք, որ Օձնեցու ձեռնարկած միջոցառումները կրում էին կանխարգելիչ բնույթ։ Իսկ պավլիկյանների մեծ տարածում գտած լինելու հանգամանքը հերքում է հենց Հովհան Օձնեցին իր «Ընդդէմ պաւղիկեանց» ճառում. «...իսկ յայնժամ այսմիկ որպէս մեծագունի ինչ եւ նորոյ՝ հնացելոյս եւ ապօտացելոյ՝ հասանել կարծեցին (պավլիկյանները), յայնժամ ի դարանամտութեան իւրեանց սողեալ յորջիդ՝ յաշխարհամէջս եւ ի ժողովրդաբնակս համարձակեցան յարձակել տեղիս. ի հեղեդաին հեղձուցիչ ջուրցն մասն հասեալ նմա Ջրկայ անուանելով»[57]։

---

52 Հայ ժողովրդի պատմություն. հ. 2, Երևան, 1984, էջ 395։ Ե. Տեր-Մինասյան. Միջնադարյան ադանդների ծագման և զարգացման պատմությունից. Երևան, 1968, էջ 130։

53 История Византии, М., 1967, с. 59.

54 V. Nersessian. The Tondrakian movement. London, 87, p. 23. Պավլիկյաններին կայսրության մի մասից մյուսը տեղափոխելու նկատառումների և ընդհանրապես Բյուզանդական կայսրության կողմից բնակչության տեղափոխությունների բաղաքականության, դրանց տնտեսական և բաղաքական շարժառիթների ու նպատակների մասին տե՛ս P. Charanis. The transfer of population as a policy in the Byzantine Empire.—Comprehensive studies in society and history (An International Quarterly), III, 1960—1961, p. 140—154.

55 История Византии, М. 1967, с. 43.

56 Հայ ժող. պատմ. քրեստոմատիա, էջ 756։

57 Յովհաննու Իմաստասիրի..., էջ 39։

Պավլիկյանների Ջրկայում կենտրոնացած լինելու փաստի վրա ուսումնասիրողներից ուշադրություն է դարձրել միայն Ֆ. Կոնիբերը, որը և փորձել է տեղորոշել այն։ Հենվելով Ղ. Ինճիճյանի հետազոտությունների վրա, Ֆ. Կոնիբերն առաջարկում է Ջրկայի տեղորոշման երկու տարբերակ. մեկը Տիգրիս գետի ակունքների մոտ, Վանա լճի հյուսիս-արևմուտքում, հավանաբար Բյուրակնյան լեռների շրջանում, մյուսը՝ Բայազետի մոտ, Արարատ լեռան մոտակայքում[58]։ Մեր կարծիքով Ֆ. Կոնիբերի առաջարկած տարբերակներից առավել ընդունելի է առաջինը, քանի որ այն գտնվում էր Տիգրիս և Եփրատ գետերի ակունքների (ջրառատ վայրեր) և բյուզանդական սահմանին ու Մանանաղիին մոտ, որի մասին հիշատակություններ կան նաև բյուզանդական աղբյուրներում։ Իսկ Բայազետի և Արարատ լեռան մոտ նախ ջրառատ վայրեր չկան և երկրորդ՝ դժվար թե պավլիկյանների կենտրոնատեղին լիներ երկրի կենտրոնական շրջաններում՝ Դվինի կաթողիկոսարանի հարևանությամբ։ Մ. Կանարը նույնպես Հայաստանում պավլիկյանների կենտրոնատեղին համարում է Եփրատ գետի վերին հոսանքների շրջանում[59]։ Իսկ Ե. արք. Դուրյանը նշում է, թե Ջրկան լիճ է, որ գտնվում էր Նփրկերտի մոտ[60]։

Փաստորեն Հովհան Օձնեցին որպես պավլիկյանների կենտրոնավայր հիշատակում է միայն Ջրկան։ Օձնեցու շարադրանքից հստակ է նաև, որ պավլիկյանները կենտրոնացած էին միայն Ջրկայում, այլ ոչ թե տարածված էին ողջ Հայաստանում։ Հայ մատենագրության մեջ որևէ այլ կոնկրետ հիշատակություն չկա Հայաստանում պավլիկյան համայնքների կենտրոնավայրերի մասին։ Ավելին, Հովհան Օձնեցին նշում է, որ «...ի նոսա (պավլիկյաններին— Մ. Պ.) հատուածեալք եկին յարեցան կշտամբեալքն ի կաթողիկոսաց Աղուանից պատկերամարտք ոմանք. զի սիրէ առ համանմանիսն իւր հասանել վրիպայն ի ճշմարտութենէն»[61]։

Հովհան Օձնեցու սույն հիշատակությամբ հերքվում է նաև Աղվանքում VIII դարի սկզբին պավլիկյան համայնքների գոյության մասին ենթադրությունը։ Եթե Աղվանքում պավլիկյաններ լիներին, ապա աղվանից պատկերամարտները կմիանային նրանց, այլ ոչ թե կհասնեին Ջրկա։ Ուրեմն հաստատապես կարելի է սնդել, որ VIII դարի առաջին քառորդում, Աղվանքից մինչև Ջրկա ընկած տարածքներում, այն է՝ Արևելյան Հայաստանում, պավլիկյան համայնքներ չկային։ Միևնույն ժամանակ, սույն փաստը մեկ անգամ ևս հաստատում է պավլիկյանների պատկերամարտության հետ ունեցած սերտ կապը։ Սակայն պատկերամարտներին վերաբերող խնդիրը ևս չպետք է շարաշահել։ Շատ դեպքերում ուսումնասիրողները Աղվանից պատկերամարտների մասին հիշատակությունները դիտում են իբրև Աղվանքում պատկերամարտական լուրջ շարժման վկայություն։ Մինչդեռ, այս մասին ամենաորոշակի հիշատակությունը պահպանվել է Մովսես Կաղանկատվացու երկի մեջ տեղ գտած Հովհան Մայրագոմեցու «Վասն պատկերաց» թղթի մեջ, որտեղ նա գրում է. «Ապա Յիսուս անուն քահանայ, եւ Թադէոս եւ Գրիգոր, որ ի Մովսեսի կողմանէն էին, դնացին ի Դունայ եւ ելին ի Սոթից դաւառն։ Եւ բնակելով յանապատսն, զի

58 F. Conibeare. The key of truth. Oxford, 1898, p. Lix.

59 M. Canard. Le conte de L'île-Baleine et son utilisation dans la polemique byzantine contre les pauliciens.—Revue des etudes Arıneniens, IX, 1972, p. 382.

60 «Տաճար», Կ. Պոլիս, 1913, էջ 486։

61 Յովհաննու Իմաստասիրի..., էջ 39։ Բյուզանդական կայսրությունում և Հայաստանում պատկերամարտների և պավլիկյանների հարաբերությունների և կապերի խնդիրներին է անդրադառնում է. Մարտինը պատկերամարտական շարժման պատմությանը նվիրված իր աշխատության հավելվածում։ Նա հիմնականում հերքում է Ֆ. Կոնիբերի հիմնավորումները պավլիկյանների՝ պատկերամարտների հետ ունեցած սերտ կապերի մասին, համարելով, որ դրանք կրում էին պատահական և անկանոն բնույթ (E. Martin. A history of the Iconoclastic controversy. London 1930. «The Iconoclasts and Paulicians»).

կոնաւորը էին, սկսան ուսուցանել: Եթէ զպատկերս, որ յեկեղեցիս են նկարեալ, ի բաց ջնջեցէք եւ ընդ աշխարհական քահանայս մի հաղորդիք»։ Հովհան Մայրագոմեցին այնուհետև շարունակում է. «Պատկերամարտքն, որ իջին յԱղուանս, պղտորեցին զեկեղեցին ձեր, ապա Գարդմանայ տէրն կալեալ զերեսին արսն. որոց անուանք ի թղթիդ են, եւ կապանօք ածել ի Հայս»[62]։ Ըստ այս հիշատակության, Աղվանից պատկերամարտները VII դարի սկզբներին ընդամենը երեք հոգի էին, որոնք Մովսես Եղվարդեցի հայոց կաթողիկոսի հակաքաղկեդոնական բանակից էին և պատկերների պաշտամունքը դիտում էին իբրև քաղկեդոնական սովորույթների արմատավորում հայ եկեղեցում։ Աղվանքում պատկերամարտություն քարոզող երեք հոգևորականներն էլ շուտով հետ վերադարձվեցին Հայաստան։ Հարկ է կարծել, որ նրանց, գուցե և ուրիշների քարոզչությունը պատկերների պաշտամունքի դեմ հետագայում որոշ արդյունքներ տվել էր և ձեռք բերել հետևորդներ։ Ընդ որում պետք է փաստել, որ պատկերամարտությունը Հայաստանում (նաև Աղվանքում) ավելի շատ կրում էր հակաքաղկեդոնական ենթատեքստ, քանի որ հայ եկեղեցին այս շրջանում, հունական եկեղեցու ազդեցության տակ նոր միայն արմատավորում և հիմնավորում էր պատկերների պաշտամունքը իր դավանական սկզբունքների մեջ։ Համենայն դեպս հստակ է, որ 8-րդ դարի սկզբում պատկերապաշտությունն Աղվանքում լուրջ շարժում դառնալու իրական հիմքեր չուներ, և 705 թ. Պարտավի եկեղեցական ժողովի որոշման մեջ, ի շարս այլ աղանդների և հերձվածների, որոնց դեմ միջոցների ձեռնարկումը ժողովականները հնարավոր են համարում մոտ ապագայում, պատկերամարտությունը նույնիսկ չի հիշատակվում։

Հայաստանում պավլիկյան շարժման մեծ ընդգրկման և տարածման մասին է խոսում նաև այն փաստը, որ մինչև IX դարի 30-ական թթ. բյուզանդական մատենագիրներին հայտնի էին պավլիկյանների ընդամենը վեց համայնքներ, որոնք հիմնականում գտնվում էին կայսրության հյուսիս-արևելյան շրջաններում, Պոնտոսում և միայն մեկը՝ Մանանաղիում[63]։ Ըստ Պ. Կարանիսի, պավլիկյանները (նկատի ունի հայ պավլիկյաններին) հիմնականում կենտրոնացած էին Պոնտոսի Իրիս և Լիկուս գետերի շրջանում[64]։

Հովհան Օձնեցի կաթողիկոսի պայքարը պավլիկյանների դեմ ըստ էության սահմանափակվում էր նրանով, որ նա փորձում էր մեկուսացնել պավլիկյաններին և թույլ չտալ նրանց տարածվելու Հայաստանում։ Հետագա պատմությունը ցույց է տալիս, որ Հովհան Օձնեցին հաջողացավ դա անել։ Պավլիկյանները չտարածվեցին Հայաստանի առանցքային շրջաններում, այլ կենտրոնանալով Բյուզանդիայի սահմանակից Մանանաղի և հարևան գավառներում, VIII դարի կեսերին գրեթե լիովին կազմակերպվեցին։ Համենայն դեպս, այդ շրջանից սկսած հայկական աղբյուրները լռում են Հայաստանում նրանց գործունեության մասին։

Այստեղ, թերևս, կարելի է վերապահում անել Ղևոնդ պատմիչի մի հիշատակության «որդիս յանդանաց» մասին. «Եւ ամենայն որդիք յանդանաց իրթեալք խառնէին ի գունդ ապստամբութեանն, որք ոչ ճանաչէին զերկիւղն Աստուծոյ եւ ոչ զահ իշխանաց եւ ոչ զպատիւ ծերոց, այլ իբրեւ այլազգի եւ օտարացեալ՝ ապատակ սփռեալ դիրէին զերասս եւ զազգակիցս իւրեանց, եւ բազում աղտաղութիւնս առնէին, խոշտանգանաւ եւ գանիւք տանջանս ածեալ

62 Մովսես Կաղանկատվացի. Աղվանից պատմություն, էջ 269

63 Հայ ժող. պատմ. հ. 2, էջ 403: VIII դարի կեսերին հիշատակվում են նաև հայ և ասորի պավլիկյաններ Մելիտինեից և Թեոդոսուպոլսից The Cambridge medieval history, vol. 4. The Byzantine Empire, part 1. Byzantium and its neighbours. Cambridge University press. 1966, p. 73.

64 P. Charanis. The Armenians in the Byzantine Empire.—Byzantinoslavica C 2/22, p. 197

ի վերայ եղբարց իւրեանց»[65]։ Այս տեղեկությունը վերաբերում է 748 թ. արաբների դեմ ապստամբությանը և պատմագիտության մեջ կարծիք կա, թե այստեղ պատմիչը «որդիք յանցանաց» ասելով նկատի ունի պավլիկյաններին[66]։ Թեև ըստ Ն. Ադոնցի, խոսքն այստեղ Գրիգոր Մամիկոնյանի ուխտապահների մասին է, որոնք, ըստ Ղևոնդի, ցանկանում էին խլել Աշոտ Բագրատունու իշխանությունը[67]։ Հատկանշական է, որ «որդիք յանցանացի» մասին հիշատակությունը Գրիգոր Մամիկոնյանի և նրա կողմնակիցների Տայք տեղափոխվելու մասին պատմող պարբերության շարունակությունն է, որը հիմք է ստեղծում պնդելու Ն. Ադոնցի տեսակետը։ Մինչդեռ բյուզանդական աղբյուրները հետագա շրջանում ևս շարունակաբար տեղեկացնում են պավլիկյան շարժման տարածման և մեծ ընդգրկման մասին կայսրության հյուսիս-արևելյան նահանգներում, որոնց դեմ կենտրոնական իշխանությունը և եկեղեցին դեռ դաժան և անողոք պայքար պիտի ծավալեին։

СООБРАЖЕНИЯ О ПАВЛИКИАНСКОМ ДВИЖЕНИИ В АРМЕНИИ

МГЕР ПАПЯН

Резюме

Долгое время в арменоведении считалось, что павликианское движение возникло на территории Армении, в области Мананаги, в середине VI в. Р. М. Бартикян в своих трудах доказал, что первое упоминание о павликианах в Армении восходит к началу VII в. Новый подход к источникам и к движению в целом дает право предполагать, что павликианское движение является выражением византийских общественных отношений и родилось в Византии. А некоторые упоминания Петра Сицилийского доказывают, что павликианское движение со стороны империи было переправлено в Армению с целью ослабить и создать внутреннего врага для армянской церкви и тем самым ускорить ее халкедонизацию. В Армении не было той социальной и религиозной базы, которая могла бы создать мощное еретическое движение. Свидетельства Иоанна Одзнеци (VIII в.) говорят о том, что павликиане в Армении сосредоточились в местности Джрка, где к ним присоединились иконоборцы из Алуанка. Следует полагать, что павликианское движение в Армении и в Алуанке не имело широкого распространения. А борьба Иоанна Одзнеци, как и решение Албанского церковного собора 705 г., имели лишь профилактический характер.

---

65 Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց. Ս-Պր., 1887, էջ 123։

66 Р. Бартикян. Указ. соч., с. 42—43.

67 Ն. Ադոնց. Քաղաքական հոսանքներ հին Հայաստանում.—«Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948, էջ 37։